Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Ս.Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Ոսկեհատ Իսախանյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Արաբական Միացյալ Էմիրություններ, քաղաք Աբու Դաբի, 12-14 հոկտեմբեր 2023 թվական.
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարություն (UNFCCC secretary)
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   «Փարիզյան համաձայնագրի ներքո ազգային մակարդակով սահմանված գործողություններին ընդառաջ առաջին գլոբալ գույքագրմանն (այսուհետ՝ GST) առնչվող հարցերի շրջանակի վերանայում» աշխատաժողովի նպատակն էր գույքագրել.
   - երկարաժամկետ նպատակներին հասնելու ուղղությամբ երկրների առաջընթացի և բացթողումների արձանագրումները,
   - Փարիզյան համաձայնագրի 2-րդ հոդվածով սահմանված նպատակների իրականացմանն ուղղված գործողությունների քարտեզագրումը,
   - կլիմայի փոփոխության սոցիալ-տնտեսական ազդեցությունների և բացասական հետևանքների մեղմման քաղաքականության գործուն քայլերի ձեռնարկման նպատակով տեսակետների ձոխանակում,
   - կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած կորուստների ու վնասների մեխանիզմների համար խուչընդոտների վերհանումը:

Հանդիպմանը մասնակցում էին ՄԱԿ ԿՓՇԿ կողմ հանդիսացող երկրները, կոնվենցիայի կողմ չհանդիսացող, բայց Փարիզյան համաձայնագրի ընդհանուր նպատակների իրականացմամբ հետաքրքրություն ցուցաբերած երկրները, դիտորդ կազմակերպությունները, ինչպես նաև «Շարմ Էլ Շեյխ մեղմման հարմարվողականության

և իրականացման աշխատանքային ծրագրի», «Ադապտացիայի գլոբալ նպատակների Գլազգո-Շարմ Էլ Շեյխ աշխատանքային ծրագրի», «Օվկիանոսի և կլիմայի փոփոխության երկխոսության», «Կլիմայական ֆինանսների համատեղ չափելի նպատակ» ժամանակավոր աշխատանքային խմբերի ներկայացուցիչները:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**

- SB 58-ից սկսած կլիմայական նպատակներին հասնելու համար գլոբալ գույքագրման առկա պատկերի և արձանագրված առաջընթացի ներկայացում, այդ թվում՝
  - ✓ Գլոբալ գույքագրման վերաբերյալ «Տեխնիկական երկխոսություն» խմբի կազմած վերլուծական զեկույցի ներկայացում,
  - ✓ «Շարմ Էլ Շեյխ մեղմման հարմարվողականության և իրականացման աշխատանքային ծրագրի», «Ադապտացիայի գլոբալ նպատակների Գլազգո-Շարմ Էլ Շեյխ աշխատանքային ծրագրի», «Օվկիանոսի և կլիմայի փոփոխության երկխոսության», «Կլիմայական ֆինանսների համատեղ չափելի նպատակ» ժամանակավոր աշխատանքային խմբերի ներկայացուցիչների կատարած աշխատանքների ներկայացում,
  - ✓ Գլոբալ գույքագրման էլեմենտների վերաբերյալ ՄԱԿ-ի ԿՓՇԿ քարտուղարություն ներկայացված 24 երկրների զեկույցների ամփոփ ներկայացում,
  - ✓ Կլիմայի փոփոխության հետևանքով կորուստների և վնասի նոր ֆինասական գործառնությունների կարգավորման միջանկյալ հանձնաժողովի աշխատանքի ներկայացում:
- GST-ի արդյունքի ներկայացման ձևաչափի վերաբերյալ քննարկում:
- GST-ի զեկույցի նախաբանում Կողմերի առաջարկած բովանդակության քննարկում:
- Փարիզյան համաձայնագրի 2-րդ հոդվածի իրականացման ուղղությամբ համատեղ առաջընթաց ապահովելու համար մեղմման և հարմարվողականության քաղաքականության առկա արձանագրումների ներկայացում: Ցածր արտանետումներով երկարաժամկետ ռազմավարության իրականացման և կայուն զարգացման նպատակներին հասնելու համար ֆինանսավորման կարիքների բացահայտում:
- Փարիզյան համաձայնագրի 2-րդ հոդվածի առաջընթացի գրանցման համար ապագային միտված հնարավոր հրատապ գործողությունների քննարկում:
- Կլիմայական քաղաքականությունների իրականացման պլանների և ֆինանսավորման հոսքերի վերաբերյալ զեկույցում համապատասխան էլեմենտների քննարկում:

- Կլիմայի փոփոխության հետևանքով կորուստներ և վնասի դեմ պայքարելուն ուղղված ջանքերի վերաբերյալ զեկույցում համապատասխան էլեմենտների քննարկում:
- Կլիմայական գործողությունների, դրանց վերաբերյալ ուղեցույցների շուրջ միջազգային համագործակցության վերաբերյալ զեկույցում ընգրկվելիք համապատասխան էլեմենտների քննարկում:
- GST-ի արդյունքի ներկայացման իրավական ձևաչափի քննարկում (CMA 5 որոշում, քաղաքական հայտարարություն կամ տեխնիկական հավելված):
- Հետագա քայլերի վերաբերյալ ՄԱԿ ԿՓԾԿ քարտուղարության առաջարկների քննարկում և դրանց վերաբերյալ աշխատաժողովի մասնակիցների տեսակետների պարզաբանում:

**7. Հանդիպումները, ելույթները.**

Աշխատաժողովի շրջանակում հանդիպումներ եմ ունեցել մասնակից երկրներին ներկայացված GST-ի զեկույցի նախագծում մեղմման և հարմարվողականության գույքագրման հնարավոր անդրադարձների, հիմնական կարիքները բացահայտելու և առաջնահերթություններն առավել դետալային դիտարկելու նպատակով առաջարկություններ ներկայացրած երկրներից Ավստրալիայի, Բրազիլիայի և Ճապոնիայի պատվիրակությունների հետ: Հանդիպումների ընթացքում քննարել ենք նշված երկրների կլիմայի փոփոխության դեմ պայքարելու համար գործող կառուցակարգերը, համապատասխան ընթացակարգերը, առկա գործիքակազմը, երկրների սահմանած կլիմայական նպատակին հասնելու համար ռազմավարությունները:

Աշխատակարգի համատեքստում փորձի փոխանակման նպատակով հանդիպումներ եմ ունեցել նաև Դանիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Ֆիլիպինների, Իրաքի ներկայացուցիչների հետ: Դանիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանի Հանրապետության «Կլիմայի մասին» օրենքի նախագծի նախապատրաստական աշխատանքներում համագործակցության համար:

Աշխատաժողովի ընթացքում GST-ի զեկույցի նախագծի համահեղինակ Հարալդ Ուինկլերի հետ քննարկել ենք զեկույցի կլիմայի մեղմման քաղաքականության վերաբերյալ բաժնում առկա տեղեկատվությունը և պարզաբանումներ ստացել թվային տվյալների աղբյուրների վերաբերյալ:

**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Աշխատաժողովի ընթացքում որոշում կայացվեց, որ ՄԱԿ-ի ԿՓԾԿ-ի քարտուղարությունը քննարկումների ժամանակ հնչեցված կարծիքները, զեկույցի տարբեր բաժինների վերաբերյալ ներկայացված առաջարկությունները հաշվի առնելով՝ կվերանայի

Փարիզյան համաձայնագրի ներքո ազգային մակարդակով սահմանված գործողություններին առաջին գլոբալ գույքագրմանն (այսուհետ՝ GST) առնչվող հարցերի շրջանակը: Աշխատաժողովի կազմակերպիչները գլոբալ գույքագրման վերաբերյալ զեկույցը կհագեցնի եռօրյա քննարկումների ընթացքում հնչեցված նոր տեսակետներով և կներկայացնի ՄԱԿ ԿՓՇԿ քարտուղարությանը և COP 28-ի կազմակեպչական խմբին՝ նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 12-ը կայանալիք COP 28-ի օրակարգում ընդգրկելու և COP 28-ի մասնակից երկներին ներկայացնելու համար:

Հաշվի առնելով, որ աշխատաժողովի պատվիրակների ճնշող մեծամասնությունը կողմ էր արտահայտվել որպեսզի գլոբալ գույքագրման վերաբերյալ զեկույցն ընդունվի որպես Կողմերի խորհրդաժողով ծառայող Կողմերի Համաժողովի որոշում (CMA 5 decision) և ոչ որպես քաղաքական հայտարարություն կամ տեխնիկական հավելված, հետևաբար այս որոշման վերաբերյալ ևս կհաղորդվի ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի քարտուղարությանը և COP 28-ի կազմակեպիչներին:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Աշխատաժողովի կազմակերպիչները մասնակիցներին տեղեկացրեցին, որ կլիմայի մեղմման, հարմարվողականության, ֆինանսական հոսքերի կառավարման, կորուստների վնասների դեմ ուղղվելիք ջանքերի, երկրների կլիմայի փոփոխության վնասակար հետևանքների դեմ պայքարելու կարողությունների զարգացման, տեխնոլոգիական զարգացման և առաջավոր տեխնոլոգիաների փոխանակման, կլիմայի փոփոխության շուրջ միջազգային համագործակցության և հետագա քայլերի իրականացման վերաբերյալ հավաքագրված տեսակետները կուսումնասիրվի մանրամասն և հնարավոր զարգացումների վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացվի երկրների պատվիրակություններին:

**Գործուղվող անձ** **Ոսկեհատ Իսախանյան**

18.10.2023